ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 4 սեպտեմբերի 2015 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով քաղաքացի Լյուբով Փիլոյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Լյուբով Փիլոյանը 2015թ. օգոստոսի 17-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին և/կամ 3-րդ, 18, 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել՝ ՀՀ 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական դատավարության» ՀՕ-139-Ն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի՝ «օրենքին հակասելու պատճառով» դրույթը,

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին և/կամ 3-րդ, 18, 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ 2004 թվականի մարտի 16-ի ՀՕ-41-Ն օրենքի 63-րդ

հոդվածի 1-ին մասի դրույթները՝ այնքանով, որքանով բացառում է կիրառման ենթակա ոչ նորմատիվային՝ այլ ակտերի (այդ թվում՝ վարչական), ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներին, Վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի գործերով վճիռներին դատարանների կողմից համապատասխանության ի պաշտոնե ստուգման առարկա դարձնելը:

և/կամ

3. Բացահայտել՝ ՀՀ 2013 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀ «Վարչական դատավարության» ՀՕ-139-Ն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի՝ «օրենքին հակասելու պատճառով» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը,

4. Բացահայտել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ 2004 թվականի մարտի 16-ի ՀՕ-41-Ն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողը գտնում է, որ «ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 124-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ այդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի լիազորությունն իրականացնելիս դատարանը, բացի այն, որ պետք է որոշի գնահատված ապացույցներով պարզված հանգամանքների նկատմամբ՝ դրանց կազմին համապատասխանող օրենքների, ենթաօրենսդրական և գերատեսչական իրավական ակտերի (այդ թվում՝ նորմատիվ), ոչ նորմատիվային՝ այլ ակտերի կազմը, այլև՝ պետք է գնահատի, արդյո՞ք գործի փաստակազմին համապատասխանող օրենքները, ենթաօրենսդրական, այդ թվում՝ գերատեսչական իրավական ակտերը, ոչ նորմատիվային՝ այլ ակտերն ու դրանց դրույթներն առերևույթ չե՞ն հակասում արդյոք օրենքներին:

…

Սակայն դատարանի լիազորությունը սահմանափակելը՝ նշված ակտերի միայն «օրենքին» հակասելը բացառելու հանգամանքը ստուգելով, հակասում է իրավական որոշակիության, իրավական կանխատեսելիության, իրավահավասարության, օրենքի առջև բոլորի հավասարության, սահմանադրական դատարանի և վարչական դատարանի դատական ակտերի՝ օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ակտերի

նկատմամբ գերակա լինելու սկզբունքներին: ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետում ապահովված չէ վերոգրյալ սահմանադրական սկզբունքները, դատարանի լիազորություններից դուրս է մնացել սահմանադրական հիմնարար սկզբունքներն ապահովող լիազորություն՝ ՀՀ սահմանադրական դատարանի, Վարչական դատարանի որոշումներին (ենթաօրենսդրական, գերատեսչական ակտերի, ոչ նորմատիվային՝ այլ ակտերի պարագայում) հակասելու հիմքով՝ կիրառման ենթակա չլինելու հարցի ստուգումն ու որոշումը:

Նույն հիմնավորումներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին և/կամ 3-րդ, 18, 19-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով բացառում է կիրառման ենթակա ոչ նորմատիվային՝ այլ ակտերի (այդ թվում՝ վարչական), ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներին, Վարչական դատարանի՝ նորմատիվ իրավական ակտերի գործերով վճիռներին դատարանների կողմից համապատասխանության ի պաշտոնե ստուգման առարկա դարձնելը»:

2. Քաղաքացի Լյուբով Փիլոյանի անհատական դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Քաղաքացի Լյուբով Փիլոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի՝ «օրենքին հակասելու պատճառով» դրույթի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

4 սեպտեմբերի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-21